

# ՊԱՏՄԱԿԱՆ

ԳԵՐՍԵՄԱՆԻՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

ԳԵՐԵԶՄԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Բ

Առաջին յօդուածով Ս. Աստուածածնի Գերեզմանի եկեղեցին ծագումը, զարդացումը ու այլ և այլ փափոխութիւնները ջննացինք բացատրել. երկրորդովս կը փափաքինք նկարազգի անոր գերարերեալ հայկական յիշատակները:

Մեր եկեղեցական մատենագրութիւնը Սուրբ Տեղեաց եկեղեցիներու պատմական մանրամասնութեանց մասին խիստ ժամէ: Գեթսեմանիի Ս. Աստուածածնի եկեղեցիի վերաբերութեամբ ալ զբեթէ չունի մեզ տալու ճոխ ու լիսագոյն յիշատակներ: Գլուխուածները հոս պիտի ջանանք ամփոփել: Մենք վերե յիշեցինք և հաստատեցինք թէ Ս. Կուսի Գերեզմանի եկեղեցին չորրորդ գարուն տակաւին հիմնարկուած չէր. ինչպէս յայտնի կ'ըլլայ էթէրիայի ուղեզրութեան բովանդակութիւնէն, քրիստոնեայք Աստուածածնի գերեզմանին ուխտագնացութիւն կ'ընէին, և թերեւ փոքրիկ ազօթարան մըն ալ շինուած ըլլայ հոն, բայց տակաւին շինուած չէր հոյակապ մայր եկեղեցին. ան հինգերորդ զարու շինութիւն մըն էր. այս պարագան յայտնի է մեր Խորենացիին լնծայուած «Պատմութիւն Սրբոց Հոլիփիմեանց» գիրքէն (Էջ 299): Գայիսանէի առաջնորդութեամբ Հոլիփիմեանք Հըսուովմէն փալաչէլով կը հասնին Աղեքսանդրիա, ուրիէ կը ճամբորգեն Երուսաղէմ Ս. Տեղեաց երկրպագութեան համար, «և երթեալք ի յայրն, աղօթս և պալատանս մատուցանէին առաջի Սրբուհոյն, օգնել կուսին վտանգելոյ և փախուցելոյ, որ եղեւ նորա աղալին ի մանկութիւնէ: Եւ զնացեալ անտի ի Գեթսեմանի ի Գերեզման Աստուածածնին և անգ աղօթելով.... Եւ երկըրպագելով Աստուածածնին և բազում արտասուս հեղեալ, մասով անգ ամսօրեայ ժամանակաւ: Այս տողերէն կը հասկցուի որոշապէս թէ Հոլիփիմեանց ուխտագնացութեան ժամանակ տակաւին ի մանկութիւնէ չէր շինուած Գեթսեմանիի եկեղեցին:

Մեր պատմագիրներէն Մովսէս Կաղանելայուացին (Է. զար) Երուսաղէմի եկեղեցիներու շինութեանց մասին ունի հասուած մը (Էջ 420—23) հետեւեալ վերնագրով: և վասն որ ի Սուրբն Երուսաղէմ եկեղեցւոյ շինուածի բուով եւ հիմնարդելով, եւ սոյզն յցուա անդամօր: Այս գրուած քը թանկապին յիշատակարան մըն է չորրորդ գարու Կոստանդինեան արքայալայի եկեղեցական շինութեանց: Ասոր հեղինակը հինգերորդ գարու հայ ուխտաւոր մըն է և ժամանակակից լատին կեւսան էթէրիայի և կրտսեն Մելանիայի: Կաղանեկայտուացին մեծ ծառայութիւն մը մատուցած է Ս. Տեղեաց հոյակապ սրբազնայի պատմութեան՝ իր գիրքին մէջ պահելով այս պատուական յիշատակարանը, որ նոր լոյս մը կը սփաէ Կոստանդինոսո կայսեր շինած եկեղեցիներու հիմնարկութեանց մասին, կ'ամբողջացնէ ինչ որ Եւսեբիոս և էթէրիա մեղ կը պատմին այդ շինուած քններու, մասնաւորապէս Ս. Յարութեան տաճարին և Մատորան կամ Գողովովայի վերաբերութեամբ. միայն թէ սկրզնական յիշատակարանը կրած է յետոյ երկու ձեռնմխութիւններ, կամ լաւ ևս, երկու յաւելուածներ. այս մասին պիտի անդրագառնանք յետոյ:

Մենք արդէն յիշեցինք Ս. Կուսի յուղարկաւորութեան ժամանակ հրեայ Յեփոնիա (կամ Սեփոնիա) քահանային արարքը ու Գեթսեմանիի եկեղեցւոյն որմանկարներուն մէջ տեսնուած նկարչական տեսարանները. այդ մասին վերե յիշուած յիշատակարանը կը գրէ հետեւեալը. «Եւ յայն տղուց ուր զուրդ կուսին դապաղուն կալա հրկայն արտայոյ նապահին յտալ բաղեկ՝ զմրկը կապեալ՝ ի չորից սեանցն, եւ սեանց պղնձին խանճի, եւ անանց պղնձին խայ ըզգեցուալ, որ են մարմարինեն, եւ անսի ցիւյր 250 տարեայ աստիճանի մինչեւ ցուրտը զերկաման կուսին որ ի ձորն Գերուեմանի, եւ անսի մինչեւ ի լառն Զիրենեաց ուստի վերացար Քրիստո 800 աստիճանի»: Այս հասուածին մէջ ակնարկուած քառասիւն շէնքէն մինչեւ Գեթսեմանիի ձորն շինուած քարէ տատիճանները կը յիշուին, բայց չի յիշատակուիր Ս. Կուսի Գերեզմանի եկեղեցին, փաստ մը որ կ'ապացուցանէ յիշատակարանի հինգերորդ գարու գործ մը ըլլալը ու այն եկեղեցին շինութեան հինգերորդ գարու կիսուն կատարուած ըլլալը: Յիշատակարանին

յիշատակած այս չէնքը բնականաբար կործանուած է Պարսից յարձակումներու ժամանակ: 723ին Willibald ուխտաւորը կը զրէթէ առեսած է մեծ սիւն մը՝ որ իր վրայ կը կրէր խաչ մը և ցոյց կուտար ո՛յն տեղը ուր Հրէայք ուղեցին յափշտակել Ս. Կուսին մարմինը» (տե՛ս Nouveau Guide de Terre Sainte, էջ 115): Այս սիւնը կը մնար այն ճամբուն վրայ որ կ'երկարէր Ս. Կուսի տունէն մինչև Գեթսեմանիի պարտէցը և յիշատակ մըն էր պատահած դէպքին:

Ս. Աստուածածնի տանը մասին մեր երուսաղմացի Յովհաննէս Եպո. (Հաննէ, + 1733) իր Պատմ. Երուսաղմէի գործին մէջ (էջ 250) կը զրէ Աստի (Գերսեմանի) ի վայր դեպ յարեւելոյ զոյ արտ մի, եւ ի ծայր անկան արտին զոյր սիւն մի նշանացնալ յարազ հրաշից և այժմ աւերեալ են ուր հանցիսկացն Հրէայքն։ այս տողերն ալ կը հաստատեն վերոպրեալ յիշատակարանը, որ այժմ անյայտ է:

Գեթսեմանիի եկեղեցիին հայկական յիշատակարանաց կարգին կարելի է դասել Զեռազբք Յայսմաւորի մէկ հաստուածը (Տաշեան Ցուցակ, էջ 566), ուր կը կարգանք. «Միծի և փառաւորեալ նեցման անձնաւորնեալ սուրբ Կուսին Մարիամու Աստուածածնի: Պատմ և արծան է զիտել զրէնալ զիսմէշիմ՝ որ երևն ի նեցումն անձնաւորուենոյ Աստուածածնի, զոր գրեաց Յովինանին առաքեալ և աւետարանին, և ներառածող ներշիկուս այլայիշին:» Այս ձեռազբքը, որ 1591 ին ընդօրինակուած է Յովհաննէս զրչին ձեռքով Առաքել Եպո. ին համար և տեղը յայտնի չէ, ունի հետաքրքրական ներածութիւն մը, որուն մէջ կը կարգանք «Զոր սուրբ Հարք և կաթողիկէ եկեղեցի զիսարդագաւութիւն» (—այլայիշեալ նեցումը)— անփոյթ արարին, և որպէս ճշմարիտ լեալ ընդգունէին և ընթեռնուուին: Եւ յիս ժամանակաց սրբամնեալ եպիսկոպոսապետն թեսազնիկոյ գնաց յերտուազէմ, և մրտեալ ի Գեթսեմանի՝ եղիս ի վաղեցոց ժամանակաց ի զիւր նշանագրով զպատմութիւն նեցման ամենասրբունոց Աստուածածնին...»: Ներածութեան մէջ յիշուած թեսազնիկոյ եպիսկոպոսապետին անունը չի յիշուիր ո՛չ թարգմանչին և ո՛չ ալ ընդօրինակողին կողմէն, և ո՛չ ալ յայտնի է այս նեցումն ըստած ճառին թարգմանութիւն ըլլալը:

M. Jugie կը լուսաբանէ մեզ (տե՛ս Echo d'Orient, 1922, էջ 293—307, 1923, էջ 385—397) իր ընդարձակ ուսումնասիրութեան մէջ զրելով Յովհաննէս Եպո. Թեսազնիկեցին կենաւորութիւնը կը վերլուծէ նաև անոր նեցումն Ս. Կուսի անունով ճառը: Այդ տողերէն կը հասկցուի թէ Յովհաննէս թեսազնիկէի եկեղեցիին. ան տեսնելով որ իր նախորդները զանց ըրած էին Ս. Աստուածածնի տօնին հաստատութիւնը թեսազնիկէի մէջ, մինչ ուրիշ տեղեր առ հասարակ կը կատարէին նոյն տօնը, կը փափաքի որ թեսազնիկէի մէջ ալ կատարեն տօնը, ուստի նկատի կ'առնու նեցումն Ս. Կուսի ճառը զոր Յովհաննէս Աւետարանիչը զրած էր, և կը տեսնէ որ հերետիկոսներ այլայլած են զայն և խարդախած, չալլայլուած կտորները հանելով կը վերահաստատէ աւանդական պատմութիւնը ու կը հաստատէ տօնը: Յովհաննէս Եպո. ին յունաքին ձեռազիը գտնուած է Ժ. Պարուն Պագմոնի մատենագրանին մէջ և վերջին տարիներու մէջ ալ հաստարակուած է. բայց մենք չենք զիտեր թէ ե՞րբ հայերէնի թարգմանուած է և ո՞վ է թարգմանիչը. բայց ներածութեան հայերէն թարգմանութեան մէջ տեղեկութիւն մը կայ որ կը պակսի յունաքին մէջ և չի յիշուիր թէ նեցումն Ս. Կուսին հարազատ ճառը զանելու համար թեսազնիկեցուց Եպո. ը Երուսաղմէ եկած և Գերսեմանի մենակով զած և ինն ժամանակական գրուած նեցումն Ս. ԿՈՒՍԻ Պատմութիւնը, ինչ որ կ'ապացուցանէ հայ թարգմանչին առաւելազոյն հմտութիւնը այս մասին:

M. Jugieի յիշեալ յօդուածէն կը հասկցուի թէ Յովհաննէս Եպո. Թեսազնիկեցին ո՞ր աղբիւրներէն կազմած է իր այդ ճառը. մեր նպատակէն գուրս է հոս մանրամասնել այդ պարագան, բայց պէտք է յիշենք թէ թեսազնիկեցուց եպիսկոպոսը թէ իր մատենագրական ճոփ արդիւնքներով ու եկեղեցական գործերով մեծ համբաւ մը շահած է իր զարուն, և այդ պատճառաւ է որ մեր նախնիք, հաւանաբար Ժ. Պարէն վերջ, հայերէնի վերածած են իր այդ ճառը, թէև անոր անունը անձանօթ թողուցած են ճառին ներածութեան մէջ. բայց M. Jugieի ուսումնասիրութեան չնորհիւ այլ

ևս յայտնի կը նկատուի այդ ճառին հեղիւնակին անունը:

Ինչպէս յիշուեցաւ Ս. Աստուածածնի եկեղեցին մէջ թէ՛ բիւզանգական և թէ՛ Խաչակրաց շրջաններուն Երուսաղէմի բոլոր քրիստոնեայ համայնքները պաշտամունք կը կատարէին. արաբական տիրապետութեան տակ ևս նոյնը կը շարունակուէր. թէ՛ Սալահտունի յաղթութենէն յատոյ, 1187ին, լատին պատրիարքը իր բոլոր կղերովը սափառուեցաւ Երուսաղեմէն հեռանալ, բայց ժամանակ վերջը գարձեալ Ս. Տեղեաց մէջ հաստատուելով նոյն սրբավայրին մէջ, ինչպէս կը յիշէ պատմութիւնը, զրկուած չէր կրօնական պաշտամունքներէ: Բայց նոյն տաճարին սեփականատիրութիւնը մեր ձեռագրաց յիշատակարաններէն յայտնի կ'ըլլայ որ, մանաւանդ Սալահտունի յաղթութենէն վերջ, պարզապէս Հայոց ձեռքը մնացած է. թէ այդ մասին ալ վէճեր չեն պակսած, հետեւեալ պատմական պարագաները կը հաստատեն զայտ.

1. Կարավակ Վ.ր. Երուսաղէմացին՝ 1230 ին տեսնելով որ Գեթսեմանիի եկեղեցին անձրեները խիճերով, քարերով և հողով լեցուեցած են, այնպէս որ միայն Ս. Կուսակին Գերեզմանը կ'երեէր, մաքրել կուտայ մշակներուն, փակել կուտայ տեղուոյն խորչերը և բաւերները, զոր ոսմիկները դրունի դժոխոց կը կոչէին:

2. Մարտիրոս Պատրիարք Եղիպատացի՝ 1421 ին կը նորոգէ Գեթսեմանիի Ս. Աստուածածնին եկեղեցին, անոր յատակը ու տաճնիքը կը յարգարէ սալով. ըստ Հաննէ Վ.րդ. ի պատմութեան (էջ 272), անոր յիշատակարանը գրուած է եկեղեցին գրսի մեծ գրան աջակողմը, հետեւեալ կերպով. «Ի Հայոց բուականին ԲՃՀ (= 1421), և Տր. Մարտիրոս Արքակիսկոպոս Երուսաղէմի, վասն բազում շուրջն որ լուրէ յեկեղեցին, սակ իսպացի, զեկչն և զհնիրն շինեցի: Յիշման առնեկ զիս արձանի, և յիշողաց տռն. ողորիսի»: Բայց այդ արձանագրութիւնը չ'երեիր այժմ, վասն զի տաճարի գրան փառաւոր կամարը քարերով հիւսուած և մուտքը նեղուցած են, ուստի նոյն արձանագրութիւնը կամ չնշուեցաւ և կամ քարերու տակ ծածկուեցաւ: Այս տոթիւ պէտք է յիշել թէ Հաննէ (էջ 272) սա տեղեկութիւնն ալ կուտայ. «Այս փառաւոր Ս. Եկեղեցիս յատուկ

կր ազդիս Հայոց, որպէս ի յորման Ավելիցույոց երեխն յիշատակարանի նորոգողացն և բուականի երկարագիր, որ լարին բասարաց զարկաց յայտն պատճառ է, և կուանաւ եղծեաց զայտ յումեիք զզիրան»: Մարտիրոս պատրիարքին նախորդը, Պողոս Գառնեցին (յետոյ կաթողիկոս), 1413ին կը զնէ Գեթսեմանիի ձիթենեաց պարտէզը, որի ցայժմ սեփականութիւնն է Ս. Յակոբայ:

3. Անդրեա Պատրիարք Միհրինցի՝ 1549ին կը մաքրէ Գեթսեմանիի եկեղեցին ու գատառորին հրամանովը մարմարին քարերով կը նորոգէ Ս. Կուսակին Գերեզմանը:

4. Տեղացիք 1584 ին արգելք կը յարուցանեն Հայոց Գեթսեմանիի եկեղեցիին մէջ պաշտամունք կատարելու. Խաչատուր և Փիլիպոս Եպիսկոպոսները մայրաքաղաքին մէջ կը գլուխն կայսեր եւ կ'ստանան հրովարտակ՝ ըստ առաջնոյն շարունակելու եկեղեցական պաշտամունքը:

5. 1650ին ալ գարձեալ նոյն եկեղեցին ջրով կը լեցուի, այս անզամ Հայք, Յոյնք և Լատինք կը մաքրեն եկեղեցին, ուր ջուրը մինչև սեղանները բարձրացած էր և զաւթին մէջ զիցուած հողը կը պարպին:

Վերեւ յիշուած ցուցումներէն չորսը յայտնի կը վկայէն թէ Ս. Աստուածածնի Գեթսեմանի եկեղեցին հայկական սեփականութիւն մըն էր. հաւանական կը թուի որ Հայոց չնորհուեցաւ նոյն եկեղեցին 1187ին սկսեալ, երբ Սալահտուն Երուսաղէմը գրբաւեց և Լատինք մերժուեցան քաղաքէն ու Ս. Տեղերէն: Քրիստոսի Ս. Գերեզմանին՝ Սալահտունի կողմէն Հայոց չնորհուելու պատմական պարագան (տե՛ս Սիոն, 1929, էջ 172) կը քաջալերէ մեզ որ ճշտութիւն մը նկատենք Գեթսեմանիի եկեղեցիին Հայոց սեփական ըլլալը, մանաւանդ որ նոյնը կը հաստատեն վերեւ նշանակուած պատմական արձանագրութիւնները, որով սա եղբակացութեան կուգանք թէ Ս. Աստուածածնի տաճարը ԺԲ-ԺԶ զար Հայոց ձեռքը կը զանուէր:

Քաղաքական ազդեցութիւններու հետեւանքով սակայն, յետոյ Յոյներն ու Լատիններն ևս միջամտեցին և Հայոց հետ սեփականատէր զարձան նոյն տաճարին: 1758 ին Յոյները համարձակեցան հրովարտակով տաճարին սեփականութեան մաս-

նակցութենէն գուրս հանել Հայքը և Լատինները, բայց Հայք մէկ տարի աշխատեցան Յունաց անիրաւութիւնները հերքելու և յաջողեցան ձեռք բերել իրենց կորուսած իրաւունքը, իսկ Լատինք չյաջողեցան։ Հիմքի 1228 թուականին Սուլթան Մահմուտի շնորհած կրկին հրովարտակներով Հայք և Յոյնք սեփականատէր հղած են Ս. Կուսափ նոյն տաճարին, իսկ Հայոց հետեւակ Դպտինները և Խոսրինները հոն կրնան պաշտամունք կատարել, ինչպէս նախորդով յիշած ենք։

Ս. Աստուածածնի տաճարին մէջ Հայոց սեփական տեղերն են, 1.— Ս. Յովանիայ Գերեզմանը, 2.— Տեսի սենակը, 3.— Եկեղեցին արևմտեան քեր, 4.— Աւագ սեղանը զոր շինել ուրած և Հերում թ. 1300ին, 5.— Ս. Բարրույիսկոսի և Թաղեռու սեղանը։

Ընկերովի սեփականութիւններն են։ 1.— Արտաֆին զայիրը, զոր Հաննէ (էջ 264) կ'անուանէ Գրունի. 2.— Ս. Աստուածածնի Գերեզմանը. 3.— Զեկուաւորկու տեղը. 4.— Տաճարին արտաֆին դուռը. 5.— Լուսաւարի նեցարանը. 6.— Գրիորը, թէե տուաջ Հայոց կը պատկանէր։ Այս ընկերովի սեփականութիւններուն մէջ Հայք ունին նաև որոշ իրաւունքներ, որ շատ կանուխէն համաձայնութեամբ կանոնադրուած են։

Հոս զանց կ'ընենք նկարազբել այն հայկական իրաւունքները որ կը վերաբերին կանթեղներու, շարաններու և ջաներու, պատարագելու կարգին և հանդէսներու, նաև աւելածութեան մասին։ Անոնց մանրամասնութիւնները ինչպէս նաև ընկերովի սեփականութեանց կանոնադրեալ որոշ իրաւունքները տեսնել «Բոլոնիակարուրին Ազգ Սեփականութեանց լիւանի իրաւունք, արարորութեանց և սպորտիքեանց ի Տեօրիմական Ս. Տեղիս» գլորքին մէջ (էջ 73-93)։

ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱԽՆՈՒԵՆԻ



## ԿԻԼԻԿԻԱՅՑ ԿՈԹՈՎԼԻԿՈՍՆԵՐԸ

ՃԳ.

ՅՈՎ. ՀԱՅԵՆԵԼ Գ. ԱԿԹԵՊՅԱՆ

1602 Գեկոս. 23. Այր. — Ա 1621.

Ա.

Զուգոյեցիի աշակերտին և յաջորդին կենապրութենէն քանի մը կարեսր գիծեր միայն հասած են մեզի, այն ալ ասզին անդին ցրուած, Զեռագրաց յիշատակարաններուն մէջ, իսկ անոր նկարագրին վրայ անվերապահ գովհաններ արձանագրուած են պատմութեան մէջ։

Յովհաննէս Գ. Անթէպյի, հնաեցնելով թէ՛ իր գրաններէն և թէ՛ իր մասին գրուածներէն, եղած է չնորհքով պատրաստուած կրօնաւոր մը։ Յովհաննէս կը ներկայանայ պատմութեան մէջ իր շեշտուած հոգեսր նկարագրով, իրեւ գիրքի և գրչի մարդ, իրեւ բազմաշակերտ ուսուցչի, իրեւ գործունեաց առաջնորդ՝ իր պաշտօնին և կեղեցական և գարչական ճիւղերուն մէջ։

Զուգոյեցիի վրայ գրելու ատեն մենք տեսանք արգէն Անթէպյին, որ նախ Հառու զըրկուեցաւ կարեսր պաշտօններով, և յետոյ Երուսաղէմի պարտքերուն վճարման աշխատութեան մէջ շատ գործունեայ դեր մը ունիցաւ, նախ Սերաստոյի թեմին մէջ հանգանակութիւն հատարեց ի նոպաստ Երուսաղէմի և 500 կարմիր ոսկի ձեռք բերաւ, և յետոյ Զուգոյեցիի վիւքն նշանակեց պիտ ա՛յն պատգամարութեան, զոր զրկեց Երուսաղէմ, ուր վճարեց Ս. Յակոբին պարտքերը, մաքրագործեց մայրավանքը, կարգուկանն զրաւ հոն, վերպարձաւ Հայէկ և իր գործունենութեան մասնաւման հաշիւր ներկույցուց Զուգոյեցիին, և վերջապէս զժրախտութիւնն ունեցաւ իր իսկ ձեռքով հոգին յանձնելու մահարաժամամի զոհուած իր սիրելի վարդապետին մարմինը։

Զունիք Անթէպյի մանկութեան ու պատմութեան վրայ տեղեկութիւններ։ Եթէ ենթադրութեամբ մը նշանակել ուղենքն թուականը իր ձննդեան, հաւանաբար 1530ին շուրջ պէտք է զեղերիլ, մատածելով որ 50 տարեկանին կամողիկոսացած ըլլայ իր ուսուցչին պէտք Միւս կողմէն սակայն Ս. Յակոբի թիւ 516 (582) Զեռագրի յիշատակարանին մէջ իր իսկ ձեռքով արւած է ընտանեկան տեղեկութիւնն մը, որուն համաձայն ինքն Անթէպյի է և իր ծնողքն են Յակոբ և Թամամ, ունեցած է երեք եղբայր, որոնց երկուքը մեռած են տարաժամ մահով, իսկ երրորդը, Առամել, ողջ է 1586ին<sup>(\*)</sup>։

(\*) Անթէպյին եղրօղուի մըն ալ ունի, Պօղոս Գարդուակես, որ թէեւ «ի Սոյոյ կարողիկոսարարէն», բայց անցաւ Էջմիածնի Սահակ Փ. (արուակից) կա-